ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2026թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Հիմնադրել «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

2.Սահմանել, որ «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակը և առարկան է՝

1) Երևան համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բացահայտումը, նրանց հասցեական ու համալիր սոցիալական, իրավաբանական և հոգեբանական ծառայությունների տրամադրումը, ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանն ուղղված աջակցությունը, ինչպես նաև անձանց և ընտանիքների սոցիալական իրավունքների իրացման ու հասարակական կյանքին լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

2) խոցելի խմբերի, այդ թվում՝ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բացահայտումն ու գնահատումը.

3)սոցիալական, հոգեբանական, իրավաբանական և այլ խորհրդատվական ու աջակցող ծառայությունների տրամադրումը.

4)սոցիալական ներառման, ինքնուրույն կյանքի կազմակերպման և անկախ կենսագործունեության հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

5)սոցիալական ծառայությունների հասանելիության, մատչելիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

3.Սահմանել, որ Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) Սոցիալական աշխատանքի, սոցիալական ծառայությունների, հոգեբանական

աջակցության և հարակից ոլորտների թեմաներով ուսուցողական միջոցառումների, դասընթացների և վերապատրաստումների կազմակերպումը,

2) Պետական, համայնքային և ոչ պետական կազմակերպություններին սոցիալական ծառայությունների կազմակերպման, աշխատանքային գործընթացների պլանավորման, կազմակերպչական մեխանիզմների կատարելագործման և գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում,

3) Սոցիալական ծրագրերի իրականացման շրջանակում անհրաժեշտ վերլուծական, գնահատման և մոնիթորինգային աշխատանքների կատարում,

4) Սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում,

5) Խնամքի ծառայությունների տրամադրում:

4.Հաստատել «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

5. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետով ստեղծված համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2026թ._____«_____»

Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ

(կազմված է 30 հոկտեմբերի 2026թ. և բաղկացած է 12 թերթից)

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ -------

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«___»_____2026թ.
Գրանցման թիվ _____
ՀՎՀՀ_____

աշխատակից՝

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

--- .--- . 20———թ. թիվ ------- որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝
Տիգրան Ավինյան

«ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Երևանի ավագանու ---------- ---------- որոշմամբ՝ սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում համայնքային սոցիալական ծառայությունների կազմակերպման և տրամադրման, սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների սոցիալական խնդիրների բացահայտման, գնահատման, սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական ներառման խթանման նպատակով:

Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրն Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ Քաղաքապետ):

1.4. Կազմակերպությունը կարող է դառնալ մեկ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից միայն Հիմնադրի որոշմամբ:

1.5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր կողմից ստանձնած պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

1.6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.8. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են գրանցման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.9. Կազմակերպության անվանումն է՝

1.9.1. Հայերեն լրիվ՝ «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,
կրճատ՝ «ԵՍԾԿ» ՀՈԱԿ

1.9.2. Անգլերեն՝ «Yerevan social services center» community non commercial organization կրճատ՝ «YSSC» CNGO:

1.10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Անդրանիկի փողոց, 2 շենք:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության նպատակն է՝ Երևան համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (կամ հայտնվելու ռիսկի տակ գտնվող) անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բացահայտումը, նրանց հասցեական ու համալիր սոցիալական, իրավաբանական և հոգեբանական ծառայությունների տրամադրումը, ճգնաժամային իրավիճակների հաղթահարմանն ուղղված աջակցությունը, ինչպես նաև անձանց և ընտանիքների սոցիալական իրավունքների իրացման ու հասարակական կյանքին լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

2.2. Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) խոցելի խմբերի (տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք և այլն) հայտնաբերում և կարիքների գնահատում,

2) սոցիալական, հոգեբանական, իրավաբանական և այլ խորհրդատվական ու աջակցող ծառայությունների տրամադրում,

3) տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, բազմազավակ, անապահով և այլ խոցելի խմբերի սոցիալական կարիքների բացահայտում և դրանց բավարարմանն ուղղված սոցիալական աջակցության տրամադրում,

4) սոցիալական ներառման, ինքնուրույն կյանքի կազմակերպման և անկախ կենսագործունեության հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում,

5)Երևան համայնքում սոցիալական ծառայությունների հասանելիության, մատչելիության և արդյունավետության բարձրացմանը նպաստելը,

6) Համայնքում սոցիալական ծառայությունների զարգացման և կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

7) շահառուներին և նրանց ընտանիքի անդամներին անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն և վերականգնողական ծառայությունների մատուցում:

2.3. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) Սոցիալական աշխատանքի, սոցիալական ծառայությունների, հոգեբանական աջակցության և հարակից ոլորտների թեմաներով ուսուցողական միջոցառումների, դասընթացների և վերապատրաստումների կազմակերպում,

2) Պետական, համայնքային և ոչ պետական կազմակերպություններին սոցիալական ծառայությունների կազմակերպման, աշխատանքային գործընթացների պլանավորման, կազմակերպչական մեխանիզմների կատարելագործման և գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցում,

3) Սոցիալական ծրագրերի իրականացման շրջանակում անհրաժեշտ վերլուծական, գնահատման և մոնիթորինգային աշխատանքների կատարում,

4) Սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրում,

5) Խնամքի ծառայությունների տրամադրում:

2.4. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.5. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, Քաղաքապետը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ Կազմակերպության կառավարման խորհուրդը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Քաղաքապետը, Կազմակերպության կառավարման խորհրդի անդամները, Կազմակերպության գործադիր մարմինը և նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1)Կազմակերպության հիմնադրումը,

2)Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

3)Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

4)Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:

3.4. Քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է Կազմակերպության կառավարման խորհուրդը և նշանակում է Կազմակերպության տնօրենին, վաղաժամկետ դադարեցնում է Կազմակերպության Կառավարման խորհրդի անդամների, Կազմակերպության տնօրենի լիազորությունները,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է)սահմանում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,

ը) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

թ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժ)հաստատում է գործադիր մարմնի կողմից ներկայացված Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ի)իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

4.1. Կազմակերպության կառավարման խորհուրդը բաղկացած է 7 անդամից:

4.2. Կազմակերպության կառավարման խորհուրդը ձևավորվում է 3 տարի ժամկետով:

4.3. Կազմակերպության կառավարման խորհրդի անդամների կազմը հաստատվում է Քաղաքապետի որոշմամբ:

4.4. Կազմակերպության կառավարման խորհրդի գործունեությունը կարող է դադարել Հիմնադրի որոշմամբ, Քաղաքապետը Հիմնադրին ներկայացնելով իր հիմնավորումները՝ կարող է առաջարկել դադարեցնել գործող Կառավարման խորհրդի գործունեությունը,

4.5. Կազմակերպության կառավարման խորհրդի գործունեության դադարումից հետո Քաղաքապետը սույն Կանոնադրության 4.7.1 կետում սահմանված կարգի համաձայն՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հայտարարի Կազմակերպության Կառավարման խորհրդի ձևավորման նոր գործընթացի մասին և ընդհանուր առմամբ՝ դադարումից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորի Կազմակերպության կառավարման նոր խորհուրդը:

4.6. Կազմակերպության կառավարման խորհրդի կազմում ընդգրկված անդամների քանակը սահմանվում է սույն կանոնադրությամբ՝ հետևյալ կազմով,

ա) Կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից առաջադրված 2 անդամից, ովքեր պարտադիր պետք է ունենան սոցիալական պաշտպանության (կամ հարակից) ոլորտի մասնագիտական կրթություն, համապատասխան աշխատանքային փորձ և մասնագիտական բարձր կարողություններ, ծանոթ լինեն Կազմակերպության ռազմավարական փաստաթղթերի և ՀՈԱԿ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթերի բովանդակությանը,

բ) Երևանի քաղաքապետի կողմից առաջադրված 2 թեկնածու, ովքեր չեն կարող լինել համայնքային պաշտոն զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի կամ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, ինչպես նաև Երևանի ենթակայության որևէ կազմակերպության աշխատակից և պետք է ունենան սոցիալական պաշտպանության, մարդու իրավունքների կամ հարակից ոլորտների խորը իմացություն, առնվազն 5 (հինգ) տարվա մասնագիտական կամ փորձագիտական աշխատանքային փորձ և ունակ լինեն ապահովել անկախ ու օբյեկտիվ վերահսկողություն Կազմակերպության գործունեության նկատմամբ,

գ) Միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչների կողմից առաջադրված երկու թեկնածու, ովքեր պետք է ներկայացնեն Հայաստանի Հանրապետությունում գործող այնպիսի միջազգային կազմակերպություններ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում սոցիալական պաշտպանության, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության կամ համայնքային զարգացման ոլորտներում (օրինակ՝ ծրագրերի ֆինանսավորման կամ վերահսկման գծով):

Այս ներկայացուցիչները պետք է ունենան սոցիալական ոլորտում ծրագրերի կառավարման, մոնիթորինգի կամ փորձագիտական առնվազն 3 (երեք) տարվա փորձ

և ծանոթ լինեն սոցիալական ծառայությունների մատուցման միջազգային չափորոշիչներին:

դ) Սոցիալական ոլորտի 1 անհատ փորձագետ, ով ունի գիտամանկավարժական կամ փորձագիտական առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:

4.7. Կառավարման խորհրդի անդամին առաջադրած մարմինը կամ կազմակերպությունը կարող է փոխել իր անդամին՝ 15 օր առաջ փոփոխության նպատակով դիմելով Քաղաքապետին,

4.7.1. Խորհրդի ձևավորման և պաշտոնատար անձանց ընտրության կարգը

1. Խորհուրդը ձևավորվում է հետևյալ կարգով՝

1.1. Խորհրդի ձևավորման գործընթացի մեկնարկի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է Կազմակերպության և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական տեղեկատվական հարթակներում՝ նշելով Խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները, թեկնածուների առաջադրման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման վերջնաժամկետը:

1.2. Խորհրդի անդամների թեկնածուներն առաջադրվում են սույն կանոնադրությամբ սահմանված համապատասխան մարմինների և կազմակերպությունների կողմից՝ հաշվի առնելով Խորհրդի անդամների համար սահմանված մասնագիտական և որակավորման պահանջները: Խորհրդի անդամի թեկնածուն ներկայացնում է՝

ա) ինքնակենսագրություն,

բ) կրթությունը և մասնագիտական փորձը հավաստող փաստաթղթեր,

գ) շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություն:

1.3. Կազմակերպության աշխատողների կողմից առաջադրվող երկու ներկայացուցիչներն ընտրվում են աշխատողների ընդհանուր ժողովում՝ քվեարկությամբ: Ընտրության արդյունքներն ամրագրվում են ժողովի արձանագրությամբ:

1.4. Երևանի քաղաքապետի կողմից առաջադրվող երկու թեկնածուների, միջազգային կազմակերպությունների կողմից առաջադրվող երկու թեկնածուների և բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացուցչի համապատասխանությունը սույն կանոնադրությամբ սահմանված պահանջներին գնահատվում է առաջադրող կողմի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

1.5. Անհրաժեշտության դեպքում թեկնածուների մասնագիտական կարողությունների, փորձի և Խորհրդի աշխատանքներին մասնակցելու պատրաստակամության գնահատման նպատակով կարող է անցկացվել հարցազրույց:

1.6. Թեկնածուների առաջադրման և ընտրության արդյունքներն ամփոփվում և համապատասխան փաստաթղթերի հետ միասին ներկայացվում են Երևանի քաղաքապետին՝ Խորհրդի կազմը հաստատելու նպատակով:

2. Խորհրդի կազմը հաստատելուց հետո Խորհրդի առաջին նիստում Խորհրդի անդամների կազմից, Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ և փակ գաղտնի քվեարկությամբ, ընտրվում են Խորհրդի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարը:
3. Խորհրդի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի թեկնածություններ կարող են առաջադրել Խորհրդի անդամները, ինչպես նաև կարող են լինել ինքնաառաջադրված թեկնածություններ:
4. Խորհրդի նախագահը կազմակերպում և ղեկավարում է Խորհրդի աշխատանքները, հրավիրում և նախագահում է նիստերը, հաստատում նիստի օրակարգի նախագիծը, ներկայացնում Խորհուրդը պետական, համայնքային և այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է կանոնադրությամբ և Խորհրդի աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:
5. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին նրա բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, ինչպես նաև իրականացնում է նախագահի հանձնարարությամբ այլ գործառույթներ:
6. Խորհրդի քարտուղարը կազմակերպում է նիստերի նախապատրաստման աշխատանքները, ապահովում անդամներին օրակարգի և անհրաժեշտ նյութերի տրամադրումը, կազմում և վարում նիստերի արձանագրությունները, ինչպես նաև ապահովում Խորհրդի որոշումների և արձանագրությունների պահպանումը:
7. Խորհրդի նախագահի, նախագահի տեղակալի կամ քարտուղարի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում Խորհուրդն ընտրում է համապատասխան պաշտոնում նոր անձ՝ սույն բաժնով սահմանված կարգով:
8. Խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և ընտրության ընթացքում անձնական տվյալների մշակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.8. Կառավարման խորհրդի առնվազն 5 անդամի դիմում-պահանջով Քաղաքապետը դիմում է Կառավարման խորհրդի անդամին առաջադրած մարմնին կամ կազմակերպությանը՝ պահանջելով փոխել իր ներկայացուցիչ անդամին, եթե վերջինիս գործունեությունը հիմնավորվել է անարդյունավետ:

4.9. Կազմակերպության կառավարման խորհրդի լիազորություններն են՝

ա) կանոնադրությամբ նախատեսված Կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ ներկայացնելը, ինչպես նաև սահմանում է Կազմակերպության զարգացման ռազմավարական ուղղությունները և երկարաժամկետ նպատակները,

բ) Կազմակերպության գործադիր մարմնի նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը,

գ) Հիմնադրի կողմից սահմանված կարգով Կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը,
դ) իր աշխատակարգի և ներքին կարգապահական կանոնների հաստատումը,
ե) Կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի ընտրությունը,
զ) սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ,
է) Կազմակերպության գործադիր մարմնի հաշվետվությունների հաստատումը և քննարկումը,
ը) Կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը,
թ)տալիս է համաձայնություն Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի, հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի վերաբերյալ,
ժ) դրամաշնորհների, նվիրատվությունների և այլ նպատակային միջոցների օրինական և նպատակային օգտագործման վերահսկողությունը,
ի) պահանջել և ստանալ Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը և կատարել դիտարկումներ,
լ) իրականցնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

5.1. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Քաղաքապետը:

5.2. Կազմակերպության տնօրենը օրենքով, Հիմնադրի ու Քաղաքապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրության, Հիմնադրի կամ Քաղաքապետի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.3. Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Քաղաքապետը:

5.4. Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

5.5. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

5.6. Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Քաղաքապետի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

5.7. Տնօրենի լիազորությունները.

1)առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

2)ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Քաղաքապետի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3)տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4)աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր, ինչպես աշխատողների տրվող հավելավճարները համաձայնեցնում է՝ վերադասի կարգավիճակ ունեցողի հետ,

5)վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

6)ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

7)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

8)կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

9)սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

10)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11)ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Քաղաքապետին,

12)կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու դրանք ներկայացնում է Քաղաքապետի հաստատմանը,

13) Խորհրդի համաձայնությամբ քաղաքապետի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

6.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ:

6.3. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

6.5. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

6.6. Կառավարության որոշմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

6.7. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

6.8. Ամրացված գույքի օգտագործմամբ Կազմակերպության ստացած եկամուտները համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ:

6.9. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

6.10. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

6.11. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները և հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր

աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

6.12. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Քաղաքապետը:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

7.2. Կազմակերպության լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

7.3. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը և նպատակը**

Որոշման նախագծի ընդունման նպատակը Երևան համայնքում նոր՝ «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ) հիմնադրումն է և վերջինիս կանոնադրության հաստատումը:

ՀՈԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է Երևան համայնքում համայնքահեն սոցիալական ծառայությունների միասնական և կենտրոնացված համակարգի ձևավորման, սոցիալական աջակցության ծրագրերի արդյունավետ համակարգման, ծառայությունների մատչելիության բարձրացման, ինչպես նաև տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի սոցիալական կարիքներին համալիր, հասցեական արձագանքման և շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ, ինչպես նաև ծրագրային կառավարման և ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման պահանջով:

2. **Ներկայիս իրավիճակը և առկա մարտահրավերները**

Ներկայումս Երևան համայնքում սոցիալական, հոգեբանական, իրավաբանական և այլ աջակցության ծառայություններ տրամադրվում են հասարակական կազմակերպությունների և միջազգային ծրագրերի շրջանակներում, ինչը կարևոր դեր ունի սոցիալապես խոցելի խմբերին սոցիալական աջակցություն և համապատասխան ծառայություններ տրամադրելու գործընթացում: Միաժամանակ, համայնքում գործող բազմաթիվ ծառայություններ իրականացվում են ծրագրերի միջոցով կամ հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների կողմից, ինչը կարևոր ներդրում է բնակչության խոցելի խմբերի համար աջակցության հասանելիության ապահովման գործում: Այդուհանդերձ, ծառայությունների երկարաժամկետ շարունակականության և կայունության ապահովման նպատակով կարևոր է դիտարկել դրանց ամրապնդման հնարավորությունները՝ ներառյալ ծրագրերի ավարտից հետո ծառայությունների պահպանման և զարգացման մեխանիզմների ձևավորումը:

Համակարգված ծառայությունների զարգացմանը միտված մոտեցումները հնարավորություն կտան բարձրացնել ծառայությունների միջև փոխգործակցությունը, շահառուների նպատակային ուղղորդումը և ապահովել առավել արդյունավետ աջակցություն:

Հետևաբար, վեր հանված կարիքների հիման վրա անհրաժեշտություն է առաջացել համայնքային մակարդակում ձևավորել գիտահեն, արդի և հասանելի սոցիալական

ծառայությունների ինստիտուցիոնալ և կայուն համակարգ, որը կապահովի Երևան համայնքում բազմաշերտ սոցիալական աջակցության միասնական մոտեցումների ձևավորում, որն էլ իր հերթին կհանգեցնի խնդիրների հասցեական արձագանքման, ծառայությունների համակարգված պլանավորման և արդյունավետ կառավարում: Նման համակարգի գործարկման համար նպատակահարմար է ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որը հնարավորություն կտա ապահովել ծառայությունների հետագա ընդլայնումը, համակարգված և արդյունավետ իրականացումը:

Կարևոր է, որ համայնքի բնակիչների համար կենսական նշանակություն ունեցող սոցիալական ծառայությունների հասանելիությունը պայմանավորված չլինի բացառապես առանձին ծրագրերի կամ ժամանակավոր ֆինանսավորման առկայությամբ, այլ հիմնված լինի համայնքի կողմից ձևավորված և պատասխանատվությամբ կառավարվող կայուն համակարգի վրա: Սա հնարավորություն կտա ոչ միայն արձագանքել առկա սոցիալական մարտահրավերներին, այլև կանխատեսել և արդյունավետորեն հասցեագրել համայնքի ապագա կարիքները:

ՀՈԱԿ-ի ստեղծմամբ ամրագրվում է երկարաժամկետ ռազմավարական գործունեություն՝ ուղղված սոցիալական ծառայությունների ոլորտում առկա կարիքների և անջրպետների շարունակական գնահատմանը, դրանց վերացմանն ու ծառայությունների որակի բարելավմանը, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ ծառայությունների զարգացմանը և կատարելագործմանը:

3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Երևան համայնքի որդեգրած քաղաքականությունն ուղղված է համայնքում սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրմանը և խոցելի խմբերի (տարեցներ, հաշմանդամություն ունեցողներ, անապահով ընտանիքներ և այլն)՝ հասարակության մեջ լիարժեք ներառմանը՝ համահունչ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նպատակներին: Նոր ՀՈԱԿ-ի հիմնադրումը ուղղակիորեն բխում է պետական և համայնքային սոցիալական քաղաքականության և Երևանի զարգացման ծրագրերի տրամաբանությունից՝ նպաստելով ներառական, հոգատար և մարդակենտրոն հասարակության ձևավորմանը:

Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ կստեղծվի և պետական ռեգիստրում կգրանցվի համապատասխան գործառույթներով օժտված ՀՈԱԿ, որի գործունեությունը թույլ կտա ապահովել որակյալ սոցիալական, իրավաբանական, հոգեբանական և այլ աջակցության տրամադրում, սոցիալապես խոցելի խմբերի կյանքի որակի բարձրացում և սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության բարձրացում Երևան քաղաքում:

4. **Իրավական հիմքերը**

Որոշման նախագծի ընդունման համար իրավական հիմք են հանդիսանում հետևյալ ակտերը.

- **«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը**, որի համաձայն Երևանի ավագանին որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատման մասին:
- **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը** (որը կարգավորում է հիմնադրման կարգը) և **11-րդ հոդվածը** (որը սահմանում է կանոնադրության հաստատման և բովանդակության պահանջները), որոնք կիրառելի են ՀՈԱԿ-ների նկատմամբ:
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 20-րդ հոդվածների դրույթները, որոնք վերաբերում են սոցիալական աջակցության նպատակներին, հիմնական սկզբունքներին և տեղական ինքնակառավարման մարմինների դերին՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում:
- **«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի** ընդհանուր դրույթները՝ նախագծի ձևաչափի և ընդունման գործընթացի մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ համայնքի կողմից համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծումը հանդիսանում է իրավաչափ, հիմնավորված, նպատակարամար և ուղղված է հանրային շահի իրացմանն ու համայնքի կայուն զարգացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ